

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

51րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 10

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

9 ՄԱՐՏ 1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹԱՂՈՒՄԷՆ ԵՏՔԸ (խմբագրական)	S. Ս.
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԲԱԺԻՆԸ	Օ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՖ
ԿԷՍ-ԲԺՇԿԱԿԱՆ. Բաշիֆա-Տուշիֆա	ՏՈՔԹ. Յ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ («Ժուռնալ» լրագրին բացած Գրական Մրցումին մեջ առաջիկ հանդիսացած երկու նորավեպերէն մէկը) Թարգ.	ՏՕՄԻՆՕ
ԸԼԼԱՅԻ, ԱՂՈՐ (Բանաստեղծութիւն)	Թ. Տ. ՅԱԿՈԲԵԱՆ
ՎԵՌԱՐԱՆԻՆ ԱՆԿԻՆԷՆ. Երկու բռնուններ	ՄԵՆԱՍԷՐ
ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ	Վ. Ա. Գ.
ՅՈՒՇԱՅԵՏԸ	

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ դրո. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ դրո., կանխիկ վճարելի : Արտասահման 12 ֆրանկ կամ 5 բուլլի : Թղթաստացիական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն : Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առաւել, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պանչէ-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյլ :

Չեղբէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԵ

درعليه ده غلطه ده «ماسيس» غزتهسى ادارهسى

եւ ԵՐՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Խորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ա Ր Ի Ս Ե Ի Ը


ՇՈՓԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՅ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



ՎճԱՆԻՆ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացի պարզ օճառներ :

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքաց դէմ մրցելու առաւելութեան հը միացնէ գիններու գերազանց աժանութիւնը : Փախաբողներուն՝ քաթալօկը ձրի կը զրկուի :

Մեծ աքանակ գնումը ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵԻ Կ. ԻՆՃԻՃԻՆԱՅ ՈՐԴԻՔ ՎճԱՌԱՄԱՆՆԵՐԸ , իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ , յեր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՋ. — ՊՊ Լաքառիէն Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքուտօն :

ՊՈՄՊԱՅ. — ՊՊ Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔՍԱՆ՝ՐԻԱ. — Պ. Մ. Գալփեան

ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանթալ .

ՌՈՒՍՃՈՒԳ. — Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք .

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտօքի .

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻՒՌՆԻԱ. — Պ. Հայնրիխ Վառ :

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիմո Ֆերանտէզ :

ԻՍԿԻԻՊ. — Պ. Մ. Քափուանո .

ՊԷՅՐՈՒԹ. — Պ. Յրանքի Շիֆֆեր .

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղրաք :

ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Արիս Կ. Ինճիճեան .

ՍԵՐԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեմատուրեան

ՌՈՏՈՍԹՈ. — Պ. Յակոբ Բոզվատալ



ՌՈՍԻԱ — ROSSIA



Ս. ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ 34,775,642 Փրանք

Երաշխաւորութեան գումար 121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած 164,172,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսան 6ին տեղը

Ընդհ. Բնակիչ

Ա. ՀԻՒՐՈՒԻՋ

Ընդհ. Գործակալ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԷԼՆ

ԱՄԱՆԻ

5177 ՏԱՐԻ

— 9 ՄԱՐՏ 1902 —

ԹԻԻ 10

ԹԱՂՈՒՄԷՆ ԵՏՔԸ

Տարաբաղդ էօթէնի թաղման խնդիրը մինչև Կրօնական Ժողովին տառանք հանուելու չափ կարեւորութիւն ստացաւ : Զիմացանք թէ ո՞ր Գերապատիւ կամ Արժանապատիւ Հայրերն էին՝ այսքան հոգածութիւն ցոյց տուող, — անո՞նք արդեօք որոնք կը մասնակցին կամ կը նախագահեն որ եւ է յուզարկաւորութեան՝ բաւական է որ հրաւիրուին ննջեցեալին տէրօջը կողմէ, առանց հարցնելու փնտռելու թէ ո՞վ է մեռնողը, պարկեշտ ու առաքինի կեանք մը անցուցած է որպէս զի իրենց վեղարին չուք ու գաւազանին փայլը ընծայեն դադարին, ու երբեմն մինչև իսկ դամբանական խօսին : Կերեւայ թէ շատ վտիտ է Կրօնական Ժողովին օրակարգը, որ այսքան պարզ ու արդարանալի բան մը — երեք քահանայով կատարուած թաղում մը — հարցումի առարկայ կըլլայ հոն ու գայթակղութիւն կը պատճառէ, մինչդեռ պատահած է որ ապօրէն կենակցութիւն ունեցող կիներու կամ այրերու, եւ նոյն իսկ անձնապահներու հանդիսաւոր թաղումներ ուշադրութիւն չեն գրաւած, որովհետեւ ընկերային դիրք ու նիւթական կայութիւն չբնութագրուած են զանոնք :

Բարեբաղդաբար, ներկայ պարագային մէջ, Կրօնական Ժողովին տուած որոշումը կը փակէ խնդիրը, ինչպէս երեւցաւ չորեքշաբթի առաւորակութիւններուն հաղորդուած սա զեկոյցով :

«Բերայի մէջ սպաննուած կնոջ մը նկատմամբ լրագրաց մէջ զանազան դիտողութիւններ հրատարակուած ըլլալով՝ բացատրութիւն պահանջուեցաւ եւ հասկցուեցաւ թէ

«այդ կինը հրապարակաւ հանրային կին մը «չէր եղած եւ բոլոր պարագաները քննուելով՝ միայն երեք քահանաներու ներկայութեամբ թաղման հրաման տրուեր է» :

Ուրեմն եթէ երեքի տեղ վեց քահանայ ներկայ գտնուած ըլլային, եւ վարդապետ մըն ալ նախագահէր, — ինչպէս ծանուցուեցաւ՝ բայց հերքուեցաւ իսկոյն, — ապաշխարութեան կամ փիլոնաղրկութեան պիտի դատապարտուէին անոնք, նոյնքան յանցաւոր նկատուելով որքան կը նկատուին եկեղեցիին մէջ զիրար ծեծող կամ ապօրէն արարքներ զարծող տէրտէրները : . . չաբաթը չանցած ներման արժանանալու համար : Ակիբսիմոս անուն քահանայի մը մեղապարտութիւնը զեռ մէջտեղ կեցած է ու «Զամբիւղով թաղումն» ալ յիշողներ կը գտնուին թերեւս : Տարուան մէջ մէկէ աւելի անգամներ լրագիրները կը հրատարակեն թէ այս ինչ եկեղեցիին մէջ ննջեցեալ մը երեսի վրայ թողուեր է՝ աղքատ ըլլալուն կամ թէ «սակարկութիւնը» չի յարմարելուն համար, եւայն : Ասոնք բոլորը անմեղ ու սովորական բաներ կը նկատուին, եւ աւելի հրապարակողն է որ կը քննադատուի՝ քան ենթական : Ամէն հայ անհատի իրաւունքն է սպասել քիչ մը աւելի անաչառութիւն իր բարձրաստիճան կղերէն, որ եթէ Կրօնային իրական գեղծումներու առջեւ լուռ եւ անյիշաչար կը մնայ շատ անգամ, դոնէ նոյնքան վեհանքութիւն ցուցնելու է պզտիկ ու ամուր պարագաներու առջեւ, ինչպէս էր այս թաղումը : Մնաց որ, զայն արդարացնող նկատումներուն էն անկարեւոր

ըր միայն հրատարակութեան կուտայ Կրօն.
Ժողովին զիւանը , թէ «Այդ կինը հրապարա-
կաւ հանրային կին մը չէր եղած» — մինչդեռ,
տրուած բացատրութիւնը , որչափ որ իմա-
ցանք , կը պարունակէր սա էական կէտն ալ ,
թէ «Այդ կինը , իր կենդանութեանը ատեն ,
« Եկեղեցւոյ Խորհուրդներէն զրկուած մը չէր
« որպէս զի մեռնելէն ետքն ալ զրկուէր այդ
« խորհուրդներէն » եւ թէ «Անձնագրային»
« բուն համար է միայն Եկեղեցւոյ խառնութիւնը,
« արարողութիւն չի կառարկու եւ միակ քա-
« հանայով մը թաղուելու » :

Ծաղիկի մէջ «Փայլակ» եւ Մասիսի մէջ
«Մենասէր» երբ զրեցին այս թաղումին վրայ ,
անիրաւ գտնելով լրագրական զիտողութիւն-
ները եւ արդարացնելով քահանաներուն ներ-
կայութիւնը , միմիայն մարդասիրական զգա-
ցումի ու ներողամտութեան ոգիի տեսակէտ-
ներուն վրայ ծանրացած էին : Կրօնական
Ժողովին մէջ տրուած բացատրութիւնները
կը ցուցնեն ահա , թէ այդ տեսակէտներէն
դուրս , եկեղեցական օրէնքին տրամադրու-
թիւնն ալ կ'արդարացնէ յուզարկաւորութեան
համար արուած հրամանը , եւ թէ այն Ս.
Հայրերը ու լրագրագետները՝ որոնք զար-
հուրած կերեւային այս կրօնական զեղծու-
մէն՝ կրնան հանդարտ խղճով քննանալ այսու-
հետեւ . ո՛չ հաստատուած կանոն մը ոտնա-
կոխ եղեր է , ո՛չ ալ Եկեղեցւոյ պատիւը
ծախուեր է :

S. Ս.

«ԳՈՂՑՈՒԱԾ ՄԱՏԱՆԻՆ»

Թերեւս անոր համար որ Վիքթոր Հիւկոյի
ճննդեան հարկւրամեակին տօթիւ շատ գըր-
ուեցաւ այս օրերս անոր գործերուն վրայ ,
մօտակայ թեմի մը առաջնորդը՝ այդ բնթեր-
ցումներուն ազաւորութեան տակ՝ կուղէ կեն-
դանացնել Միլիէլ Կալիսկոպոսին յիշատակը . .
իւր անձին օրինակաւ , Զիրանասցի երէցը —
վիպասանութեան մէջ — իր արծաթեայ աշ-
տանակները զողջունել տալէ ետքը , զանոնք
գտած վայրիեանին վերադարձուցած էր Ժան
Վալթանին , ներդաւիրաւ սգիւով մը . մեր եւ

պիսկոպոսին դողցուցածը — իրականութեան
մէջ — բոկի մատանի մըն է զօր դռնել ու
վերստանալ չուղեր , նոյն ներողամտ սգիւով
մանաւանդ որ ինքը բաղդաւորութիւնը ունե-
ցեր է հանդիպելու հեռաքնակ բարեկամի մը
որ նոր ու աւելի՝ թանկագին մատանի մը
նուէր զրկեր է իրեն : Հայ «Միլիէլ»ը չը-
պասեր սակայն որ ինքն ալ իր վիպագիրը
ունենայ ապագային եւ կը փութայ օրը օրին
իր գրիչով հրապարակել այս ամէնը , առի-
թէն օգտուելով իր թեմականներուն Երեսն
աւուր համար իրենց անտարբերութիւնը :

Եթէ առաքնութեան մրցանակ մը հա-
տատուած ըլլար մեր մէջ , եկեղեցականնե-
րուն համար , չէ՞ք կարծեր որ իր գողցուցած
մատանիէն հրաժարող այս անհիւթապաշտե-
պիսկոպոսին պիտի վիճակուէր անիկայ
Միայն թէ , մտածողներ պիտի ըլլային , հա-
սարկութիւնը աւելի հետաքրքիր է զիտնա-
լու թէ այդ առաջնորդ Կալիսկոպոսը ինչ բար-
ւոքումներ մտցուց իր թեմին կրթական-եկե-
ղեցական գործերուն մէջ , ինչ չափով մա-
նակցել տուաւ իր վիճակայինները հանրային
նպատակ պէտքերուն , որոնք կը ներկա-
յանան հետզհետէ , քան թէ անոր մատանի-
ներուն պատմութեամբը : Յետոյ , այդ պատ-
մութեան բերել կցել ամբողջ համայնքի մը
անտարբերութիւնը՝ առաջնորդին կամ առաջ-
նորդարանին նկատմամբ , խնդիր մըն է պ-
րնաւ առնջութիւն չունի հոշակաւոր մատա-
նիին հետ որուն անյայտացման պարագաներ
իւր անձնաթիւ են այստեղ մեզի : Ինչ , արդ-
եօք այդ համայնքը անօթի՞ կը ձգէ իր եպի-
կոպոսը , չի՞ հոգար անոր նիւթական պէտ-
քերը , թոչակ չի՞ վճարեր : Ասին մը տէր-
տէրներն էին որ կը զանգատէին իրենց նիւ-
թական վիճակէն , ու ապրուստի միջոցներու
անբաւականութենէ . հիմայ , կարգը Կալի-
կոպոսներուն եկած ըլլալու է , հարուստ թե-
մերու մէջ :

Ս. Հայրապետը , որ Թիֆլիզ կը գտնուի
այցելութիւն տուեր է Վրաստանի Էկզար-
խը քախ արքեպիսկոպոսին որ նոյն օրն իր
փոխադարձ այցելութեան դալով Ն. Ս. Օմա-
թեան , սիրալիր տեսակցութենէ մը ետքը
իջեր է նաեւ Վանքի Մայր-Եկեղեցին , զի-
տեղով եկեղեցական հնութիւնները , հարա-
բաւեալութիւնը , զարդերը :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԲԱԺԻՆԸ



Անցածները երբ սկսնակին մէկը, — ոչ իսկ սկսնակ մը, անծանօթին մէկը, — իր առաջին տախտակութիւնը փչած ուռեցուցած, արդար! հպարտութիւնով մը ինծի կը յանձնէր հրատարակել տալու համար, փորձուցայ առանց իսկ դեռ ականարկ մը նետած ըլլալու ձեռագիրին վրայ, հարցնել անգամ մը, թէ դրեւէ առաջ ինչե՞ր ունէր կարդացած:

— Բովանդակ Պօլսահայ լրագրութիւնը, ըսաւ ձեռքի լայն չարժուածեալով մը, եւ... տարիներէ ի վեր: Գաղտնիք մը չէ անչուշտ, ձեզի համար մանաւանդ որ, մեր այսօրուան թերթերը անթափանչի բազմակողմանիութիւն մը ունին հին ատենի թերթերուն հետ բազմաթուով: Մարդ հիմայ ամէն բան կրնայ գտնալ անոնց մէջ, ամէն ճաշակի յարմար գրութիւններ, ամէն բանի յատուկ բաժիններ, ուր մարդ կրնայ քաղել իրեն պէտքի ամէն տեսակ նիւթեր: Կատարեալ դպրոց մը...

Կատարեալ դպրոց մը, Իբաւ է. հիմա հոն դարակի մը պէս աչքերու բաժնուած են սիւնակները. լուրերու բաժին, կրօններու բաժին, շահու բաժին, մանչերու բաժին, խոհանոցի բաժին, վիճաբանութեան բաժին, հարմիրքի բաժին, եւ դեռ ի՞նչ գիտնամ: Բայց ատոնց ամէնը գիտնալով ու ճանչնալով մէկտեղ, կարծեմ ոչ ոք պիտի կրնար միտքէն անցունել որ անիկա կրնար գրական մարդարան մը դառնալ, մեր նոր համեմոյ պաշտօններուն համար մանաւանդ:

Այդ բոլոր բաժիններուն մէջ երկու հատ ասկայն մասնաւոր կերպով ուշադրութիւնս կը գրաւեն, որոնց վրայ կը բերուիմ երկու խօսք ընել հոս Եւաթ՝ քաղաքական բաժինին արտառոց առատութիւնը. երկրորդ՝ դեղարուեստի բաժինին բացարձակ բացակայութիւնը:

Այն քանի մը տարիներէն ի վեր ուր, քաղաքական պարզ ու ամփոփ լրատուութիւնը, անսահման թփփ մը առնելով վերա-

ծուցաւ անօգուտ հետաքրքրութեան մը մշտագրգիւ յագեցումին, չի պակսեցան իրաւ, մէկ քանի արդարադատ գրիչներ՝ որոնք իրաւացիօրէն հարուածեցին այդ սխալ դրութիւնը, որ օտար լրագրիչներէն՝ օրը օրին գիրքին թարգմանութեան մը հանգստաւէտութեանը վրայ կը հանգչէր խմբագիրին համար եւ որուն լուրջ խորհող մարդու մը ջիղերը թունդ հանելու ոչ մէկ յատկութիւն կը պակսէր: Շատ մը հակասական լուրեր, որոնք հետեւեալ օրը ապահովօրէն պիտի հերքուին եւ կթէ չի հերքուէին ալ, նորէն չեմ գիտեր ինչ կարեւորութիւն պիտի կրնային ունենալ մեզի համար: Ատոնց վրայ կրնանք աւելցնել իբր տեսութիւն կարգ մը ինքնահաւան վճիռներ, իրենցմէ մղոններով հեռու եւրոպ-Ամերիկեան դիւստագիտութիւններուն վրայ, որոնք որ եւ է կերպով մեզի շահագրգռելու հանգամանքը չունին բնաւ եւ պարզ remplissage մը ըլլալէ դատ, կարգ մը պարագ մարդոց սրճարանական զրախօսութիւններուն նիւթ հայթայթելու միայն կը ծառայեն:

Ասոր փոխարէն, այդ սիւնակներով ոչնչութիւններուն փոխարէն, կարեւոր պակաս մը, ահաղին պակաս մը կը պեղուի հոն, դեղարուեստի աշխարհին հետաքրքրութիւններուն մեր մէջ անարձագանդ մնալովը: Թէ ի՞նչ կանցնի կը դառնայ միտքի անսահման ոլորտներուն մէջ, արուեստին համաշխարհային կատարելագործութիւններուն մէջ, ատոնք բնաւ չեն շահագրգռել մեզի: Կատարելապէս կ'անգիտանանք զանոնք կամ աւելորդ կը սեպենք հետաքրքրուիլ անոնցմով, ուսումնասիրել զանոնք, դասեր քաղել ու օրինակներ դարձնել անոնցմով:

Վայրկեանը վայրկեանին, կէտ առ կէտ կ'իմանանք շատ անգամ, եւրոպական լուրերու բաժինին մէջ թէ Սարա Պէրնատի չունը ի՞նչ փայփայանքներ կ'ընդունի իր տիրուհիէն, երբ միեւնոյն լրագրիչներուն ընթերցողներուն

մեծագոյն մասը կանգնուած այդ միեւնոյն «գերբնական» դերասանուհիին այսօրուան ré-pertoire, իր յաջողութիւնները, եւ իր հրաշալի արուեստին բացատրողական նկարագրութիւնները :

Բէժանի պէս անստգիւտ արուեստագիտուհի մը Պօլիս կուգայ, իննգ ներկայացում միայն տալով երթալու համար, կատարեալ ինքնոյք մը, փափկաճաշակներուն, թատերասէրներուն, արուեստը սիրողներուն համար, եւ հայ թերթերը փոխանակ անոր ներկայացնելիք խաղերուն ուրուագիծները տալու կանխաւ, անոր բարձր արուեստին գեղեցիկ կողմերը մեզի բացատրելու եւ մեր միտքերը ատոր պատրաստելու, ոչ իսկ compte-rendu-ներ մը բերին մեզի (*). ո՛չ իսկ անոր Պօլիս եկած՝ ըլլալը հաճեցան իմացնել մեզի իբր չքեղ ու առիթէն օգուտ քաղելիք événement մը գեղարուեստասէրներու աչքին, միմիայն անոր համար որ Պարոնայք Տօրվալ-Թամպուրիտիս չեն ուզած մէյմէկ թիկնաթու ձրի հրամայել մեր խմբագիրներուն, անանկ ասան մը ուր բովանդակ թատրոնին մէջ սանթիմ մը տեղը ձեռքէ ձեռք կը քաշքշէր կոր արդէն ամէն մարդ եւ փարայով : Տարբեր ինչիւր է որ թատրոնի վարիչները՝ օտար խմբագիրներուն պէս հայ խմբագիրներն ալ մարդու տեղ դնելու եւ տոմսակ զրկելու պարտաւոր են, քանի որ թատրոնը լեցնողներուն մեծ մասը Հայերը եղած են միշտ : Բայց մեկ տոմսակի մը չի նուիրուելուն համար, արուեստով հետաքրքրուող իր բոլոր ընթերցողները զրկել օրուան այդ մեծ ու բացառիկ հաճոյքէն, — զոր թերեւս անգամ մըն ալ առիթ պիտի չունենան ձեռք անցունելու իրենց կեանքին մէջ, — արամաբանութիւն մըն է որուն ամէն ուղեղի տրուած չէ տէր ըլլալ :

Այսօրինակ ձեռնպահութեան մը ու անտարբերութեան մը փոխարէն մեր թերթերուն ընթերցողները արդեօք ո՛րչափ պիտի զարմանան երբոր լսեն որ, օտար երկրի մը մէջ ներկայացուած թատերախաղ մը, իր

«առաջին»ին հետեւեալ օրը իսկ բաղմամբ compte-rendu ներ ունենալէ զատ, քննադատութիւնները կը պոռթկան, որոնց միջոցով օրն ալ անմիջապէս կը հասնին ֆինանսաքննարկներուն ֆինանսաքննարկները որոնք ամէն բան կը ցուցադրեն, կը բացատրեն, կը պարզեն թեր ու դէմ, եւ հասարակութիւնը ամէն կերպով միջամուխ կընեն արուեստի առաւելութիւններուն ու թերութիւններուն : Եւ այդ ամբողջին զուգաւորումներէն է որ կը ժայթքի ճաշակ բուսած բանը :

Գեղարուեստի միւս ճիւղերուն, նկարչութեան, երաժշտութեան, դրականութեան անցնելէ առաջ, որոնց համար միշտ միեւնոյն չորութիւնը, անտարբերութիւնը կը դանդաղ մեր սիւնակներուն մէջը, երկու խօսք եւ թատրոնի մասին : Առաջ, շատ աւելի քան ու աւելի փոքրածաւալ թերթեր ունեցած ատենին, ասկէջ շատ աւելի մօտէն ու կանոնաւորապէս կը հետեւէինք օրուան գեղարուեստական շարժումին, միմիայն անոր համար որ այն ատենի թերթերը նուազ հաշուաւոր, նուազ տափակ, նուազ չուկափէին : Ամէն մարդ կը յիշէ դեռ Tournée Artiste-ի ժամանակ, այն շատ աղւոր ու չափահաս, դրաւիչ ու իմաստասիրող ուսուցիչ սիրութիւնները, վերլուծումները, համարատուութիւնները որոնք՝ ատենին տեղի ունեցած եւ այնքան հաճոյք պատճառեցին միաբան փափկասուններուն : Որովհետեւ գեղարուեստի անհունապէս եւ անփափկութեն ճաշակը կը թող ու նրբացնող բանն է, որուն ոտքի վրայ կանգնող անգամ թօթուելու պիտի չի կրնար : Եւ կոչուիլ այսօրուան բաղմամբեւեակ քաղութեան յօդուածները :

Միւնոյն բանը միւսներուն համար այսօր մենէն ոչ մէկը, — կը բաւէ որ օտար թերթի մը շատանորդ եղած չըլլայ, — գիտէնայ իսկ անունները, Եւրոպայի նկարչական աշխարհաճակ վարպետներուն : Ո՛ւր մնայ անոնց գործերը եւ այն փուլերը որոնց միտած են այսօր բոլոր գեղեցիկ արուեստները : Մէկ երկու անգամ յեղեղուած գրական անուններէ զատ բան մը իմացած չունինք միտքի որ եւ է արտագրութիւններու վրայ աշխարհի որ եւ է մէկ կողմը : Հետզհետէ

(*) Ծ. Խ. — Արեւելք միայն հրատարակեց շահեկան յօդուած մը Դր. Մ. Յակոբեանէ՝ Տիկին Բէժանի վրայ ընդհանրապէս ու անոր մէկ ներկայացմանը վրայ մասնաւորապէս :

ախեղերական համբաւներով պոռթկացող անուններ անձանք թէ կը մնան միշտ մեր գրական հրապարակին վրայ որ նուր կուգայ կարծես իրենց պատկերին չըջանականեր կազմելու համար։ Բերնին շողիքները վաղցնող քանի մը բաժանորդի չա՜նը վրայ չի տալու մղձաւանջէն ծնած՝ արտառոց թերթօնները թող չեն տար որ քիչ մըն ալ անոնց ճշմարտագէտ օգտակար ու ճաշակաւոր արտադրութիւնները գտնուի՞նք։ մեր թերթերուն rez-de-chaussée-ները, հոգ չէ որ նախագէտ քիչ մը դժուար ըլլայ այդորինակ նախաձեռնութիւն մը եւ վերջէն իր ահագին օգուտները ունենայ, բարոյական ու գեղեցկագոյնական, հետեւաբար եւ, — անխուսափելիօրէն իրենց համար, — գրպանի տեսակէտով։

Ատենով խելահաս Ֆրանսացիներէն շատեր հետաւորէն ինքզինքնին կ'այպանէին օտար արտադրութիւններու հանդէպ միշտ անտարբեր, անգիտակ ու քիչ մըն ալ խուլօրէն հակառակօրէ ըլլալնուն համար։ Բայց անոնք գոնէ, մեզի հետ բաղդատելով, անհունութիւն մը ունէին իրենք իրենց մէջ, միաքի իրենց մէկուսիւթեանը մէջ, անով զբաղելու ու աշխարհն ալ անով զբաղեցնելու համար։ Մեր գրականութիւնը ի՞նչ ունի որ։ Զգենք որ անկէ ի վեր անոնց այդ բարքերուն մէջն ալ քիչ փոփոխութիւն չէ որ մտած է։ Հիմա նոյն սահմանափակ ու օտարամերժ մարդիկը չեն ա'լ անոնք։ Ընդունած են վերջագէտ որ գեղեցիկը օգտակարին պէս, ոչ սահման ունի ոչ հայրենիք։ Ռուսական վէպերը շատոնց կընէ որ մարտի արշաւանքի մը պէս ողորդեցին Բարիզի պուլվառները։ Վականէր եւ Քօքլէն՝ փոխադարձաբար թշնամի նկատուած հողերու վրայ ծափեր կը խլեն։ Սինքիէվիլ օրուան մարդն է։ Հիւսիսի մեծ խորհողները իրենց երկրպագուները ունին հոն, եւ խաւացի արդիւնները տաք տաք կը ներկայացունին, կը կենսագրուին, կը թարգմանուին, կը լափուին։

Եւ խորհի՛ր որ երկրասարդ աղաքներ, զբոնելու ցաւէն բռնուած պատանիներ, զարգանալու տենչով վառուած ուսումնասէրներ, մեր լրագրութիւնէն դուրս չեն ճանչնար ուրիշ կարգաւու բան։ Անկէ անդին չեն դօրեր ի-

րենց կարճատես աչքերը, եւ այնքա՛ն պէտք ունին առաջնորդուելու իրենց ընթերցողներուն մէջը։ Բայց ի՞նչ կուգէինք որ ընէին անոնք։ Գուշակի ոգի չեն կրնար ունենալ անոնք բնականաբար կարգացածնին մեծ բան մը կը կարծեն իրենց միաժամ խանդովը եւ կը գոհանան անով։ Մինչդեռ մեզի պէտք էր ցոյց տալ անոնց, պէտք էր ծանօթացնել անոնց, մասնաւոր ընել միտքին ու արուեստին անծայրածիր սահմանները, ամէն ինչ որ աղւոր է, ամէն ինչ որ վսեմ է, եւ ամէն ինչ որ բարձրացնող, գեղեցկացնող, ազնուացնող է։ հոգ չէ թէ մերը չըլլայ ան։

Եւ նորէն կը փորձուիմ յիշել հին լրագրութիւնը, — թուականով դեռ մօտ, բայց չուկատութիւնով դեռ չի վարակուած լրագրութիւնը, — ուր Մկրտիչ Շահնազար, մասնաւորագէտ կը սկսէր շարք մը իմաստալից եւ հիւթեղ յօդուածներու ուր յաջորդաբար կը ներկայացնէր մեզի, Ռուսական վէպին վրայ Տը Վօկիւէի հոյակապ էջերուն ամփոփոյքը, Թօլսթոյի, Ֆլօպէտի, Մօբսսանի, Զօլաի, Պուրժէի, Շիրվանդատէի եւ ուրիշներու գործերուն վրայ տեսութիւններ, նկարագրութիւններ, ծանօթագրութիւններ եւ զոր, աւա՛ղ, իր վաղահաս անհետացու մէն ետքը ոչ ոք ուղեց կամ կրցաւ շարուանակել։

Վերջերս, նորաձեւութեան պատրուակին տակ քիչ շատ ընդհանրացած աղւոր բաներէն մէկը եղաւ նուագահանդէսներ սարքելը, բարեգործական կամ արուեստասիրական նպատակներով։ Բայց աղէկ դիտող մը շուտով պիտի նշմարէր որ այս կարգի հանդէսներու տեղեկաբերութիւններու ատեն միմիայն բարեգործական հանգամանքին վրայ է որ կը խօսուի եւ երբեք արուեստագիտական մասին վրայ ձեռնհասօրէն, ինչպէս որ արդէն ժողովուրդն ալ բարիք մը գործելու հարկին տակ է որ կերթայ հոն, չէ թէ արուեստին սիրուն համար։

Բայց եթէ ժողովուրդին ճաշակը կարճ է, եթէ նկարչութիւնը, քանդակագործութիւնը եւ այլն սաղմնային են մեր մէջ, եթէ գրականութիւնը ըսելով մեր չորսուկէս սիւնակ արձակը կը հասկնանք միայն, պատճառ մը

չեն ատոնք որ չուսումնասիրենք օտարինե-
ներուն բարձր ու գեղեցիկ արտադրութիւն-
ները, արուեստները, զարութիւնները, մեր
մէջ ալ զանոնք ճանչցնելու, անոնց ճաշակը
ներշնչելու եւ անոնց հասնելու նախանձը
մշակելու համար: Եթէ գեղարուեստը մե-
ռած է մեր մէջ, անոր վրայ լռութիւն
պահելով չէ որ պիտի յարուցանէինք զայն:

Ըստ իս, ամէն թերթ իր գեղարուեստի
բաժինը եւ անոր յատուկ քրտնիկագիրները
պէտք էր ունենալ, որ օրը օրին հաճէր, —
պարտաւոր ըլլար, աւելի ճիշդը, — հաղոր-
դակցութեան դնել մեզի, բարձր տաղանդ-
ներուն, մեծ միտքերուն, նշանաւոր ար-
ուեստագէտներուն եւ իրենց գործերուն հետ:
Այն ատեն աշխարհի ինչու՞թեան աւելի
գիտակ, զարգացման աւելի ընդունակ եւ
մեր մտաւոր խեղճուկրակութիւններուն վը-
րայ նուազ յաւակնոտ պիտի ըլլայինք:

Բայց մանաւանդ նուազ նիւթապաշտ եւ
աւելի նրբաճաշակ պիտի ըլլայինք:

1/14 մարտ 902

Օ. ԶԻՅԵԴԷ-ՍԱՐԱՅ

ԿԵՍ—ԲԺՇԿԱԿԱՆ



ՐԱՏԻՔԱ—ՏՈՒՏԻՔԱ

Ասկէ քանի մը տարի առաջ Կալկաթայի
արուարձաններուն մէջ աշխարհ կուգան եր-
կու զարմանալի հնդկիջաղջիկներ, որոնց ծը-
նողքը նշաւակ կ'ըլլայ այլանդակ աւելորդա-
պաշտութեան մը անարգանքին: Այդ նորածին
աղջիկներուն ծնողքը, այն աստիճան կը նեղ-
ուին այս պատճառաւ, որ վերջապէս ստոյգ
մահէ մը աղատելու համար կ'ապաստանին
մօտակայ անտառ մը:

Երկուորեակներ էին այդ նորածինները,
ո՛չ սակայն սովորական անասկէն. իրարու
կապուած էին թաղանթով մը կամ մօրթով
մը, եւ այս պարագան այնքան այլանդակ ե-
րեւցած էր որ՝ աւելորդապաշտները պարտք
սեպած էին անարգել այդ հրէշային ծնուն-
դին պատճառ եղող ծնողքը: Հնդկի բարձ-

րաստիճան պաշտօնատար մը սակայն ասոնց
օգնութեան կը հասնի, իր պաշտպանութեանը
տակ կ'առնէ այդ երկուորեակները եւ կը կոչ
զանոնք Րատիքա—Տուտիքա, երկու հնդկ
չափուածներուն անունով:

Այս երկուորեակները, որոնք պահ մը առաջ
կ'անարգուէին՝ ապա կը դրուին տաճարի մը
մէջ, ուր քրմուհիները կը փափագին բարձ-
րացնել զանոնք դիցուհիներու աստիճանին:
Դրամը սակայն տարբեր կարգադրութիւն մը
ընել կուտայ եւ այդ նշանաւոր երկուորեակ-
ները գնուելով Եւրոպա կը բերուին ու դի-
սուեններուն քննութեան եւ հետազօտութեան
հետաքրքրական առարկաներ կը դառնան:
Ըսկ այն տասը սանդիմեղը երկայն ու չորս
սանդիմեղը լայն թաղանթին համար, որով
իրենց մարմինները իրարու կապուած էին,
ինչպէս միութեան գիծը կապած է իրենց ա-
նունները վերնագրիս մէջ:

Եւրոպա փոխադրուելէ վերջ այս փոքրիկ-
ներուն առողջութիւնը կը խանգարուի, եր-
կուքն ալ կը տկարանան, կը հիւժին, եւ Բա-
րիդի բժշկները կը համոզուին թէ անոնցմէ
գէթ մէկը մահացու հիւանդութենէ մը ըր-
նուած էր: Ուստի մինչեւ այդ բոլորէն, այ-
սինքն ասկէ իբր վեց շաբաթ առաջ, անոն-
կապով իրարու հետ ապրող այդ աղջիկները
իրարմէ զատելու որոշումը կը արուի, եւ
Բարիդի նշանաւոր վիրաբոյժներէն մէկը յա-
ջողապէս կը կատարէ բաժանումի այդ նշա-
նաւոր ու եզակի գործողութիւնը:

Ըօի արգէն թէ երկուորեակները իրարու
միացունող կապը տասը սանդիմեղը երկայն
ու չորս սանդիմեղը լայն թաղանթ մըն էր:
Վիրաբոյժին գործիքներուն համար մեծ գործ
մը չէ այդ թանձրութեամբ կամ այդ երկայ-
նութեամբ հիւսուածք մը կարել: Քիչ անգամ
կատարուած գործողութիւն մըն էր ասիկա
սակայն, եւ վաւերական նախընթացներ չա-
չի գտնուելուն՝ Եւրոպայի մասին շատ մը վար-
նումներէ վերջ կը ձեռնարկեն գործողութեան:

Գործողութիւնէն առաջ երկուորեակներուն
մէկուն կը ներարկեն ներկ մը, որ միւսին
մէջին հետ կը խառնուի քանի մը վայրկեան
վերջը: Աօր հարկաւ վճառքար կը հաստատէ
միութեան գիծին կամ կապին ինչքան սերտ
ըլլալը:

Գործողութեան անմիջական ելքը դոհացուցիչ կ'ըլլայ, ինչ որ պարզ լեզուով ըսել է թէ հիւանդը չի մեռնիր գործողութեան սեղանին վրայ: Շարաթ մը վերջը սակայն Տուտիքան կը մեռնի ա՛յն հիւանդութենէն, որուն համար արդէն առաջուց դուշտկած էին բժիշկները թէ մահառիթ պիտի ըլլար: Դիագնոսթիկը կը հաստատէր թէ գործողութենէն պատճառած էր Տուտիքայի մահը: Մանրակրկիտ քննութիւններով հաստատուեցաւ թէ այդ կապ կամ թաղանթ ըսուած միութեան զիծը շատ աւելի բազմազան լինէր մինչ քան իր մէջը ունէր նոյն իսկ լեարդային հիւսուածք:

Ու այս նշանաւոր առիթովն էր որ կ'անմահանային տակէ երկու երեք տարի առաջ Հնդկաստանի մէկ աննշան գեղին մէջ ծնող այս երկուորեակները՝ Բատիքա-Տուտիքա:

Ասկէ առաջ, անցած տարւոյ Մայիսին, նմանօրինակ պարագաներու տակ կատարուած է վաւերական գործողութիւն մը Բոզալինա-Մարիա անուն երկուորեակ քոյրերուն վրայ: Ասոնց միութեան կապը շատ փոքր էր ու վիրաբուժական գործողութիւնը բաւական դահցուն չէր նկատուի՝ քանի որ անոնցմէ մէկը ապրեցաւ գործողութենէն վերջը:

Այս կարգի պատմութիւններու մէջէն սակայն ամենէն հետաքրքրականն է Սիամցի երկուորեակ եղբայրներուն: Ասոնք — Շանկ եւ Էնկ — չէնք չնորճ ստակ շինեցին ինքզինքնին հո՛ս հո՛ն ցուցադրելով, եւ ապահովաբար կրնայ ըսուիլ ասոնց համար որ եթէ իրենց աղայութեանը իրարմէ անջատուէին չի պիտի կրնային անանկ հանգիստ կեանք մը վարել, Իրենց այլանդակ ծնունդին չնորճիւ շատ երջանիկ ու ճոխ կեանք մը վարեցին ու կարգուեցան երկու քոյրերու հետ, ապրելով վաթսուոն երեք տարիներու պատուական չորջան մը, ըստ երեւոյթին կատարելապէս երջանիկ:

Երկուորեակներու դարմանողի ցուցադրութիւն մըն ալ ես ինքս ակնհետեւ բազմը ունեցած եմ, Լոնտոնի մէջ, եւ որուն վրայ այն ատեն — տակէ իբր տասներկու տարի

առաջ — գրած եմ Արեւելի մէջ: Այդ երկուորեակները շատ աւելի զարմանալի ու հետաքրքրական էին քան Բատիքա-Տուտիքան, կամ Բոզալինա-Մարիան կամ նոյն իսկ Շանկ-Էնկը: Իմ տեսած երկուորեակներս կապով չէին միացած իրարու, պորտէն վեր երկու զատ անձեր էին, իսկ պորտէն վար՝ մէկ: Ուրիշ խօսքով, իւրաքանչիւրը ունէր իրեն յատուկ գլուխը, ուսերը եւ թեւերը, բայց միայն երկու ոտք՝ երկուքին համար, ինչպէս նաեւ մէկ փոր: Ասանկ պարագաներու տակ հարկաւ անջատումը խնդիր չէ երբեք:

Միւս պարզ կարծուած օրինակներուն մէջ ալ խնդիրը կը կնճռոտի սակայն, քանզի դիտուած է որ նոյն իսկ բարակ թաղանթով մը իրարու կապուած երկուորեակները երբեմն կ'ունենան մեկ սիրտ, որուն դուռ կրնաս աւելցունել նաեւ մեկ հոգի, քանի որ բաժանումը երկուքին ալ մահուան պատճառ պիտի ըլլայ:

Ներկայիս՝ գիտութիւնը ընդհանուր կերպով ընդունած է թէ այս այլանդակ երկուորեակները կրնան անջատումի գործողութեան ենթարկուիլ երբ Ի գիրին ուղղահայեաց գիծերուն պէս կապուած են իրարու, բայց հարկաւ, ինչպէս ըսի, ո՛ր եւ է գործողութիւն անարգարանալի է իմ տեսած երկուորեակներու դասին պատկանող զոյգերուն վրայ, որոնք կը նմանին Y գիրին:

Վերջին ծանօթութիւն մըն ալ:

Մարդուն մէկը հետաքրքրուել է գիտնալ թէ աշխարհի մէջ ի՞նչ համեմատութեամբ կը պատահին այս զոյգ — ծնունդները, ու համոզուել է (որուն դուք ազատ էք համոզուիլ կամ ո՛չ) թէ ամէն 100,000 սովորական ծնունդի կը պատահի հատ մը այս անսովոր զոյգ-ծնունդէն. ուրիշ խօսքով, միայն եւ ըստ այսի մէջ չաբաթը՝ այս կարգի երկու զոյգ-ծնունդներ կը պատահին: Կը կարծուի նաեւ թէ այսօրինակ ծնունդներու թիւը աւելի շատ է՝ մասնաւորաբար Հունգարիայի, Աւստրիայի, եւ Հարաւային Գերմանիայի քան ուրիշ ո՛ր եւ է երկրի մէջ: Ստոյգ է նաեւ թէ այս տեսակ երկուորեակները շատ կարճատեւ կեանք կ'ունենան, ինչ որ անտարակոյս կը բացատրէ անոնց հազուագիւտ ըլլալու պարագան:

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻ ՄԸ ՇՈՒՐՋԸ

Այս անգամ՝ *osur* եւ հոյակապ «Գրական Մրցում»-ի մը շուրջը պիտի դառնանք *Ժուռնալ* լրագրին հաստատած մրցումը, որուն ենթարկուելու համար ղրկուած ձեռագիրներուն քիւր 5000ը կ'անցնի, եւ *srու*ած մրցանակներուն գումարը 3250 Ֆրանքի կը հասնի : Մրցումը երկու մասի բաժնուած էր, նորավեպ եւ Ֆանթեզի, առաջին մրցանակը ըլլալով 1000 Ֆրանք : Քննիչ Յաննաժողովը, որուն կ'անդամակցին Ֆրանսայի ականաւոր գրագէտներն ու վիպասանները, իր վերջին նիստին մէջ՝ Ժողե-Մառիա *sp* Հերէշիայ նախագահութեամբ՝ ներկայացուած նորավեպներուն մէջէն երկու հասք հաւասարապէս գեղեցիկ գտնելով, որոշած էր առաջին մրցանակը երկուքի բաժնել եւ 500ական Ֆրանք նուիրել իւրաքանչիւրի հեղինակին : Միւսները ստացան 300էն մինչեւ 100ական Ֆրանք, քննիչներուն կատարած դասաւորութեան կարգով :

Մասիսի ընթերցողներուն համար շահեկան կը սեպենք ներկայել առաջին համալսարանացող այդ երկու նորավեպերէն մէկը, *La rente viagère*, զոր հայերէնի վերածած *Մատենի մեղքը* ին յաջող քարգմանիչը : Առանց երբեք յաւակնելու բաղդատութեան եղբայրացեալ *Ժուռնալ*ին ու *Մասիս*ին այս մրցումներուն միջեւ, դիտեցինք միայն որ բարիքն *osur*ներէն առաջին մրցանակը շահող նորավեպն ալ գեղջուկ կեանքի պատկեր մըն է ծերուկի մը ընչաքաղցուրիւնը նկարագրող, ինչպէս էր Վահան Յարութիւնեանի «Անժան փան աղբար»ը : Եւ քերեւս նիւզ այս գնագողիպութեան համար է որ մեր աւետանակիչը «Տօմից» իր քարգմանութիւնը նուիրած է Յարութիւնեան եղբայրներուն որոնք իրենց գրչով այնքան փայլ եւ ոյժ կուտան գաւառային գրականութեան :

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ(*)

(ՆՈՐԱՎԷՊ)

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ

Ձիւնը սկսելուն պէս, կրակարանին մէջ մէկ անկիւնը կը կծկուին կը նստին էրիկ կնիկ, երկուքն ալ ծեր, քով քովի բերուած ծունկերնին անկած դէպի արցակը որթի ճիւղերուն որոնք կը ճարճատին կը վառին, ձեռքերնին դէպի վար կախած, կը որցուցած, տաքութիւնը ժողվելու, իբր թէ զայն դէպի իրենց քաշելու ձեռով, շարունակական դողդաղանքով մը : Ձմեռուան շուտ անցնող վերջալոյսը մեղմիւ կը լուսաւորէ աղտոտած ապակիները միակ պատուհանին որ ցածը, փորուած է պատին մէջ : Սեւցած առանձնապէս կախուած է կանթիկը առանց իւրի եւ

պատուիրդի, իսկ հողոտ գետնին վրայ փորուած են, հոստա հունա, ծակեր ուր լուսայլ ջուրը լեցուած է ու լճացած :

Անզաւակ ծերացած գեղացիներու չքաւոր կեանքն է ասիկա :

Սա կայ որ իրենք ուտելու հաց ունենալու, գետնախնձոր ունին հացի մնացորդներէն մէջ պահուած, խողի խոշոր կտոր մըն ալ որ կրակարանին մէջ եփ կելլայ, կը շոգիանայ Գիշերը անկողին կը մանեն փորներնին կուշտ, ոտքերնին տաք... երջանիկ են գրեթէ... մինչդեռ ուրիշ շատեր... :

Բայց երբոր մարդուկը, իր կոտորած մէջքով, թմրած պրկուած բազուկներով եւ այնքան երկար տարիներէ ի վեր միօրինակ

(*) *La rente viagère* :

աշխատանքով դաշտերու մէջ փորելէն կորն-
ծած կմախքովը հասկցաւ թէ ա'լ պիտի չի
կրնար բա՜նը ուսին վրայ վերցնել եւ հունձ-
քի պարկերը կռնակը առնել, սիրտհասնումը
առաւ զինքը. ո'վ պիտի կերակրէր հիմա
ղիրենք. . .

Կինը, թէեւ իրմէ քսան տարեկան պըզ-
տիկ, չէր կրնար սակայն փոխարինել էրիկ
մարդու ուժը :

Վերջին տարին, փորձած էր անգամ մը,
էրկանը տեղ աշխատելով. բայց հունձքը չառ
գէշ եղաւ : Հողը, վարժուած էրիկ մարդու
խառնուրդին, մերժեց արգասաւորել ձախո-
ղաբար ցանոտած սերմը : Տուած քիչ մը բանն
ալ ծախքին բաւեց :

Այն ատեն խորհուրդ տուին իրենց, քա-
նի որ զաւակ չունէին, մէկու մը մըտա հաս-
ցուցած պիտի չըլլային իրենց պատառ մը
հողը եկամուտի վերածելով :

— Ինչ որ ալ ըլլայ, մտածեցին ծերունի-
ները, ուտելու հաց մը կը գտնանք :

Երկուր ատեն, ծամծմեցին այս կարեւոր
գործը. յետոյ վիճաբանեցան անոր վրայ :
Այգին, դաշտը, մարգագետինը, բոլոր ա-
սոնք մեծ բան մը չէին արժեք, տուններնին
պէտք էր իրենց՝ պատասպարուելու համար :
Երկու հարիւր Փրանք առաջարկեցին, իրենց
երկուքնուն համար կենսաթոշակի հաշուով :

Բոլոր հաշիւները ընելէ վերջ, հազիւ
հացագործին պիտի բաւէր առածնին եւ դեռ
ի'նչ պարտքեր կային անդին :

Մինչդեռ, եթէ էրկանը համար միայն ըլ-
լար, չորս հարիւր Փրանք պիտի վճարէին,
հարստութիւն մը. ո՛հ, ի'նչ ցաւագին փոր-
ծութիւն :

Եւ սակայն, ծերունիքը մերժեց. վստահա-
բար, տարիքին նայելով, ինքը պիտի մեռ-
նէր առաջ եւ այն ատեն, ի'նչ պիտի ըլլար
կնիկը : Տոպրակ մը կռնակէն կախած, պի-
տի չստիպուէ՞ր մուրալ փողոցէ փողոց :

Այնքան սիրած էր կնիկը, իր ժանէթը,
կարգուած ատեն, ինքը արդէն տարիքը ա-
ռած : անիկա ա'յնքան թարմ ու կայտառ :

Մնաց որ, կինն ալ սկսած էր լալ, ա-
նուշիկ մը, առանց խօսելու. եւ ծերունիքը
վճարար յայտարարեց թէ գործին չէր եկած
այդ տեսակ կարգադրութիւն մը :

Բայց խեղճ կինը այնքան տխեղծ էր որ
միայն իր կեանքին համար երեք հարիւր Փը-
րանք առաջարկուեցաւ :

— Աղէկ է, ըսաւ ծերունիքը, եւ ստորագ-
րութիւն տուաւ :

Մէկ քանի տարիներ անցան : Չաշխա-
տելը քիչ մը դժուար եկաւ իրենց նախ :
Արեւին դէմ նստած, տան սեմին մօտ նըս-
տաբանին վրայ, կը դիտէին դաշտ գացող
մարդոց անցնիլը, կարօտով կը հետեւէին
անոնց. եւ երկար հառաչներ կ'ունենային :
Ատեն մըն ալ եղանակով ժամանակ անցու-
ցին. սկսան հետաքրքրուիլ լուսինով, անձ-
րեւով որ կը փճացնէ ամէն բան կամ երաշ-
տութեամբ որ կը չորցնէ բոյսերը, կը խան-
ծէ պտուղները. բայց վերջապէս սիրտ չու-
նէին :

Ինչերնո՞ւն պէտք : Ամէն երեք ամիսը
անգամ մը, հնչուն փայլուն դրամով, հունձ-
քերնին ծախած պիտի ըլլային :

Բայց եղաւ որ, իրենք ալ խնդան այսպէս
մտածելուն : Հաստոտներու պէս կը վար-
ժուէին, համ կ'առնէին կեանքէն :

Ծերունիքը, չաշխատելով, չի յողնելով,
ինքզինքը չնեղելով, երիտասարդանալ սկսաւ :
Վրան դուրս մաքուր, իր անաչէն կնկանը
ձեռքով աղէկ մը լուացուած, սրբուած, ա-
ծիլուած, զուարթերես, պաճուճապատանքոտ
բան մը եղաւ, կուլ տալով երբեմն մէկ քանի
դաւաթ տեղական գինի որ լեզուն կը խայ-
թէ, խաժագոյն արտեւանունքներուն խորը
փայլեցնելով մշուշին մէջ առկայծող հեռա-
ւոր փարոսներու լոյսին պէս երկու աչքեր :

Բայց պառաւը փոխուած չունէր : Օր օրի
կը նիհարնար, կը բարակնար, իբր թէ
գաղանի վիշտ մը կրծէր զինքը ներսէն : Է'ն
պզտիկ քայլին կ'երևոտկար, կը զգուշանար,
տանը գործին մէջ ծուլանալով, իր ոյժը
խնայելու անտեսելու համար :

Երիկը հետը կ'իյնար :

— Ծոյլ կըլլաս կոր, ժանէթ :

— Իրաւ է, կը պատասխանէր, ժպտելու
պէս ընելով. ընելիք բան մը չունիմ ա'լ :

Օրին մէկը, ծերունիքը ուշադրութեամբ
նայեցաւ անոր :

— Հիւանդ չըլլա՞ս. . .

— Բան մը չունիմ, ըսաւ պառաւը, մէկէնիմէկ շտկուելով, կարմրեալով, յանցանք մը գործածի պէս :

Պահ մը լուռ կեցան. յետոյ մարդուկը դոյնը փոխեց .

— Ինծի նայէ՛ . . . անանկ բան չըլլա՛ր :

Բայց, նոյն վայրկեանէն, իրենց կեանքի վերջաւորութեան մէջ ունեցած երջանկու թիւնին փլաւ . . .

Միեւնոյն ցաւոտ մտածումը կը կանգնէր իրենց միջեւ, այնպէս որ կը զգուշանային իրարու նայելէ, կինը անդին կը դարձնէր երեսը եւ ծերուկը կը վարանէր անոր նայելու իր հետզհետէ վայրագ աչքերովը :

Անոր համար որ հիմա կը նախազգային կարելիութիւն մը զոր իրենց տարիքի տարբերութիւնը գուշակել տուած չէր իրենց : Հապա եթէ կիւնը մեռնէր առաջ :

Նախ ծերերը կ'անցնին, այո՛ . բայց ծերեր կան որոնք կազմի մը պէս դիմացկուն են եւ պզտիկ թուփեր կան անոր շուքին տակ չորցող : Տեսնուած չե՞ն իրենց զաւակներն թաղող հայրեր :— Մարդուկը մտքէն չէր անցուցած ասոնք :

Հիմակ, ամէն օր, իր ծերուկի ուղեղին մէջ, անգութ ու յամառ մտածում մը կը դառնար, կը յուզուէր : Եթէ կնիկը մեռնէր, եկամուտն ալ մէկտեղ ժառանգ պիտի ըլլար :

Գաղտուկէն սկսաւ հսկել անոր վրայ :

Կինը, էրկանը կասկածոտ նայուածքին տակ, աւելի շուտով կը տկարանար, վախը կը լինցնէր զինքը : Ուրպէս զի իր արցունքները չտեսնուին, զիչերը կուլար, երբեմն հառաչանք մը կը փախցնէր, մարդուկը կը ցատքէր, պառկած տեղէն, կատողած .

— Հիւանդ ես որ . . .

— Երազ կը տեսնէի կօր, կը մրմնջէր կիւնը, քունէս հանեցիր զիս . . .

Մնաց որ, էրիկը սովորութիւն ըրած էր ամէն բանի մէջ չարչրկել զայն . իր սէրը ատելութեան կը փոխուէր, իր բերնէն հացը գողցնել տուողի մը ատելութիւնը :

Դեռ բան մը ըսած չէր անոր, բայց, ըսելուն ալ կարգը եկա՛ւ երբ օր մը կիւնը սովորականէն ուշ ելաւ անկողինէն, աւելի տկար :

— Ըսել է որ դիտմամբ կընես կօր, ասե՛նքն դտար հիւանդ ըլլալու . մեռնելու ըլլա՞նէ, ի՞նչ պիտի ըլլայ վիճակս . . . [սխալ ամօթ չունի՞ս . . .

— Յանցանքը ի՞նչ է, թոթովեց, քե՛ն աւելի տկար եմ եղեր . . .

Մարմինը բռնեց. նայեցաւ, կենդանի մը մարմինին պէս, եւ երբ զգաց որ ոսկորներ միայն կային քուրջի պէս կակուղ հալած միտին տակ, ուժով մը երերցուց զայն քֆրելով .

— Կարելի՞ բան է որ աս վիճակին եկած ըլլաս, պէտք եղածը չունի՞ս լեցնելու համար ինքզինքդ . . . գէշ կնիկ ես, աս է . . . գո՛հ պիտի ըլլաս խաղ մը խաղալով ինծի, անանկ չէ՛ . . . ելլաս մեռնիս որ անթաթութենէ սառկի՞մ . . . ինծի մտածած չէի ըլլա՞նք երբոր ամբողջ ունեցածս քու վրայ ըրի . . . գործիդ եկաւ, միաքո՛ղ կողոպտէր զիս . . . հա՞ . . . գո՛ղ կնիկ . . . ան պիտան . . .

Պառաւը լուռ կը մնար, ուժաթափ, ամօթէն զլուխը կախ, ինքզինքը բռնելով չիյնալու համար ամէն անգամ որ մարդուկէն վայրագ նայուած քնիւրուն տակ կը գտնուէր :

Օ՛հ, այդ եղերական հսկողութիւնը իսկոյն ողորալի կեանքին վրայ զոր դեռ կը յամառէր կանգուն պահել կամքի բուռն պրկումներով, եւ որ կը լիննար, կաթիլ կաթիլ, ի վախտ ամիին մէջ ժողովուած ջուրի մը պէս :

— Հիմա ալ չուտելու՞ սկսար, որոտաց ծերուկը, ապուրով լեցուն, պնակը նետելով անոր քիթին բերնին :

— Վար չերթար կօր . . . պէտք էր ուրիշ . . .

— Համով կերակուրներ, անանկ չէ՛ . . . ծիծաղեցաւ ծերուկը . . . չիտակը աս է պակաս :

— Չէ՛, մրմնջեց խեղճ պառաւը . . . դե՛ղ պէտք ունիմ . . .

Մարդուկը կը պօռար .

— Չըսե՛ս որ ունեցածս ալ ուտելու միտք ունիս . . . սրտիդ ցա՞ւ եղաւ . . . չէ՛ . . . որ դարակիւս անկիւնը քիչ մը դրած ունեցած ըլլամ . . .

Պառաւը յուսահատ շարժում մը ըրաւ եւ անկողին մտաւ :

— Ի՞նչ կընես կոր . . .

— Քիչ մը ուժ առնեմ որ մինչեւ ամսուն մէկին դիմանամ . . . կենսաթոշակին համար եմ, զի՛տես, քանի՞ օր կայ դեռ . . .

Մարդը միաքովը հաշիւ բրաւ, յետոյ .

— Տանընթիւնը, ըսաւ .

Պառաւը հառաչեց .

— Պիտի ջանամ, պիտի ջանամ, աղմուկ մի՛ հաներ .

Այն օրէն, ինքզինքը նայեցաւ, չերերաւ լո՛ւ տեղէն, քնանալ ձեւացնելով .

Եւ ամէն առտու, կը հարցնէր, հետզհետէ տկար . . .

— Քանի՞ օր մնաց .

Յետոյ բան մը չհարցուց ա՛լ . բայց էրիկը որ պատին վրայ տեղ մը գիծերով նշան բրած էր, հատ մը կ'աւրէր ամէն գիշեր, սենեակին մէջ խօսուըռտելով .

— Տասը օր մնաց . . . ինը օր մնաց . . . ութը . . .

Կը հարցնէր երբեմն .

— Պիտի դիմանա՞մ մինչեւ ան օրը . . .

— Այո՛, կըսէր պառաւը աչքերը բաց-խփելով .

Հիմա որ վտանգը անխուսափելի էր, ծերունիը պայմանաժամին կը մտածէր միայն, այն օրուան որ պիտի տիրանար իր գանձին, կծծիօրէն հաշուած իր բերնի վերջին պատառին, Արդէն, ինքզինքէն կը զրկէր, չէր ուտեր անօթի եղած ասեւնը, կրակ չէր վառեր, ապուր չէր եփեր . Պաղ կրակարանին վրայ կ'ըսէր, մեղմօրէն, երկարօրէն, կարծր հացի կեղեւներ կը ծամծմէր .

Անհետկին մէջ այս գրեթէ ահարկու ծամ-ծմուքէն զատ ուրիշ աղմուկ չէր լսուեր .

Պառաւը կը հատնէր, շունչը կը բռնէր, ակռաները սեղմած, եւ վերմակին կը կառ-չէր, ապրելու ջանքեր ընկելով .

Առտու մը, էրիկը ըսաւ անոր, սիրտ տալու համար .

— Ապրի՛ս, աղէկ է աստեղ . . . երեք օր դեռ համարէ, ջանք մը ըրէ . . .

Բայց, ցորեկէն վերջ, գաղափար մը յը-ղացաւ .

Միթէ՛ ամսուն մէկին իր ողջ ըլլալու վկա-յազիրը ստորագրելու հափ ոյժ պիտի ունենա՞ր

կինը . Աւելի աղէկ չէ՞ր որ անմիջապէս ստո-րագրել տար, Նոյն իսկ Լիթէ կինը մեռնելու ըլլար, ձայն ձուն չէր հաներ .

Թուղթը պատրաստեց, զրիչը թաթխեց եւ կամաց մը մօտեցաւ անկողնին . . .

— Հէ՞ . . . Ժանէթ, ի՞նչ կըսես . . .

ստորագրէ՛ նայիմ . . . Ձե՞ս լսեր կոր . . .

վա՛յ, երերալու պէտք չունիս . . . կե՛ցիր, ձեռքդ բռնեմ . . . հա՛, քեզ նայիմ, մատ-ներդ շարժէ . . .

Ձեռքը պառաւին վրայ դրաւ, յետոյ ետ քաշուեցաւ, ոռնաց լացող շունի մը պէս եւ ծռելով, կռուփը վերցուցած՝ անկնդան դէմքին . . .

— Ա՛ս նայիմ, շունչանորդի . . .

BÉNÉDICT

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

ԸԼԼԱՅԻ, ԱՂՈՒՌ

Էուրիւնիդ ամբողջութեամբ դիմաց, Մոմն բլլայի Տիրամայրին աղերսող,
Որ կը ծակէ հասնող լեզուով շմուրած,
Աղջամղջին ժամին՝ կուրծք խորհրդոս :

Ալքն բլլայի սա՛ մեր ժեռուս ծովափին,
Դալար գալար փաքսուէի ոսկերուդ,
Սեռ-Մաքրութեան սրսկապանը հիւսէին
Փրփուրեմէ՛րս, ձօ՛նքս սխրիս, հոգիիս :

Մասներուդ ակ կայսռող լացո՛ղ նուագին
Խենդ շեւերը ե՛ս բլլայի, ա՛յ աղուո՛ւր,
Որոնք ոլորս՝ դաւնուելու կը հակին
Հեւոս կուրծքի քեւ քիւ առած կանչերուն :

Ըլլայի ես, արծի՛ւ մը վես, արփանուս,
Սեռ-էգի մը շուրջը յաճուն քափառուն,
Ու, քեւաբախ, գայի կայիլ շրքներուդ
Արքեմալու շի՛ք մը՝ անուշ նեկսարեմ : —

* * *

Ա՛հ, բլլայի՛ այն ամե՛նքը՝ որ կ'ըղձաս,
Երջանկութեան երազներդ լրացնող,

եւ Բու կեանքին՝ սիրոյ վիճին վաղահաս
Չեզոքացնող տարր կուգեմ որ ըլլամ . . .
Սեր-Սիրանքիդ վայելումէն գինովցած՝
Էութիւնիդ ամբողջութեանը դիմաց .

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՆԵՆ

ԵՐԿՈՒ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Դրացիս պզտիկ տղայ մը ունի , սիրուն
մանչ մը , որուն զբաղումներն ու զբօսանք-
ները դիտելէ հաճոյք կը զգամ , չունենալով
լաւագոյն ժամանց մը այս գիւղի անկիւնին
մէջ ուր կեանքը այնքան միօրինակ է : Բար-
կենդանին , երբ դիմակաւորներու ահագին
խումբեր կ'ենթադնային Բերայի մայթերուն
վրայ , պարասրահները երթեւեկելով , հոս ,
միակ դիմակաւորը զոր տեսայ , այս կայտառ
տղան էր , հազիւ ութը տարեկան , որ տանը
վարի յարկէն վեր ելաւ՝ անկիւնի բերեզակէն
գնումած թուղթէ խոշոր դիմակ մը անցուցած
իր պզտիկ երեսին , ու մօրը պատրաստած
գունաւոր հագուստները հագած , այն համո-
զումով՝ սակայն՝ թէ ո՛չ ոք կը ճանչնար զին-
քը եւ թէ մեր ձեւացուցած ահաբեկումները
ճշմարիտ էին : Իր անմեղութեանը ու ինք-
նախարութեանը մէջ , ճշմարիտ հաւատք մը
ունէր անիկայ իր ծպտումին վրայ ու մրցա-
նակ շահող շքեղ արդուգարգով դիմակաւոր-
ներէն աւելի երջանիկ ու հպարտ կը զգար
ինքզինքը : Իրաւ ինքը երջանիկ չէ՞ր ատենց
բոլորէն , իր պարզ ու աննպատակ դուր-
ձութեանը մէջ , որ ո՛չ անձկագին աքնութիւն
ունի , ո՛չ յուսախաբ վաղորդայն :

Անխմատ բան մը չէ արդէն որ ստեղծե-
րն «մանուկներու աշխարհ» բացատրութիւնը
Ճշմարիտ աշխարհ մըն է անիկայ , ուր մար-
դը եւ կինը կանուխէն կը տեսնեն իրենց
անխարդախ զգացումներով ու բնազդներով
— լաւ կամ յոռի — առանց կեղծիքի կամ
արուեստակութեան : Անառակ տղաքներ կան
որոնք ինքզինքնին խելօք չեն կրնար ձե-
ւացնել , եւ չարաճճիներ՝ որոնք կեղծաւո-

րաբար չեն սմբիր անկիւն մը . ու ճիշդ
ատոր համար կը սիրուին : Որքա՛ն հաս-
աղջիկներ ու երիտասարդներ նուազ խորշի
պիտի դառնային զիրենք մօտէն ճանչցողնե-
րուն աչքին , եթէ ծայրայեղութեան չի տա-
նէին՝ համեստութեան ձեւացումը , առաջին
ները , ու անշահախնդրութեան ձեւացումը
վերջինները :

Դրացիս սիրուն տղան — որ չեմ գիտ-
ինչո՞ւ իր . եւ իր հասակակիցներուն վրայ
սեւեռեցուց այս անգամ միտքս՝ երբ շար-
թական նամականիս Մասիսին գրելու նստա-
լիքս — թռչուն մը ունի , փայտէ հինուկ ու խա-
խուղ վանդակի մը մէջ , որուն վրայ հող-
կուտայ : Եւ հօբարդ — Օտանին բառով —
նուէր բերած է անոր՝ արհեստական թռչուն
մը , գունաւոր փայլուն վանդակի մը մէջ
զետեղուած , որուն զսպանակը խօսքնե-
կուտայ զայն , ուզուածին չափ , անընդհա-
ն երկու վանդակները քով քովի դրուած են հի-
մայ , միեւնոյն սեղանին վրայ , որուն առ-
ջեւ կ'անցունէ պզտիկ իր ժամերուն մեծա-
գոյն մասը , իր մանկական հետաքրքրութիւ-
նը լարուած ու սրուած : Ու կը նեղանայ
թէ ի՞նչու մէկը ձայն կը հանէ իր ուզած
վայրկեանին , զսպանակը սեղմելուն պէս ,
մինչդեռ միւսը լուռ կը մնայ , ատեն ատեն
միայն խօսելով : Ճարահատ , մէկդի նետա-
է արհեստական թռչունը , հօբարին բերած
վանդակը , եւ միւսով միայն կը զրադի-
հետեւելով անոր քմահաճոյքներուն , զգուշ-
ելով , խնամելով զայն , թէեւ քիչ անգամ խո-
սի ան , բայց ներդաշնակ ու անուշ :

Բնականին ու արհեստականին տարբե-
րութիւնն է ասիկայ , որ կը պարզուի ար-
մանկական մթնոլորտին մէջ , զրամով ձեռք
բերուած վայելքին — որ զգուշաբէր կ'ազդէ —
ու ինքնաբերաբար , սիրով ընծայուած վա-
յելքին — որ ինքզինքը փնտռել կուտայ —
հողիէն բլիսած բանաստեղծութեան ու անըն-
դած տաղաչափութեան , ճշմարիտ գրականու-
թեան ու խաբուսիկին , ներշնչումն ու ձեւա-
ցումն , թէեւ արհեստականները աւելի փայ-
լուն երեւան երբեմն ու բնականները նը-
ւազ հրապուրիչ երեւոյթի մը տակ :

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ(*).

—>=<—

ԼՈՅՍԻՆ ԲՈՒԺԻԶ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ. — ԱԼԻԻՄԻՆԻՈՄ. —
ԱՄՊԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՓԸ ՊԱՐԶՈՒԱԾ

Լոյսին բուժիչ գորութեանը վրայ այնքան չափազանցօրէն խօսուած է որ՝ շատեր ստիպուած են սկիստիկ գաղափարներ միայն ունենալ՝ նոյն իսկ իրականութեան հանդէպ։ Պ. Մօնին՝ այս բանը գիտնալով հանդերձ՝ չվարանցաւ գրքոյի մը հրատարակել ամբողջովին Լոյսին բուժիչ գորութեանը նուիրուած։ Գրքոյի կարգացողները պիտի հասկնան թէ՛ իրօք Լոյսին վրայ եղած տարածայնութիւններէն շատ քիչերը միայն չափազանցուած են։ Պ. Մօնին հինգ տարբեր կերպեր կը նշանակէ՝ Լոյսին բուժող յատկութիւնը կիրարկելու համար։ Մինին՝ բոցացայտիչ կանթեղ (incandescent-lamp) մը գործածելը 50 մոմի ուժ ունեցող։ Կանթեղը՝ մարմնոյն ցաւած մասին քով 10-15 րոպէ կը մնար՝ ամէն օր։ Կիրառուած սա արդիւնքը ունեցաւ որ՝ ցաւը կամաց կամաց կը մեղմանար։

Ջղացաւութեան (neuralgia) ժամանակ՝ եթէ Լոյսը կիրարկուի՝ ցաւը նախ կ'աւելնայ, բայց վերջը՝ օգտակար արդիւնքը կը տեսնուի։ Պ. Թրուվէ ալ կը հաստատէ այս ճշմարտութիւնները, եւ իր կողմէն կ'աւելցնէ որ՝ յօդացաւ տառապող գործաւոր մը ամբողջապէս բուժեց՝ Լոյսի երկօրեայ շարունակական կիրարկումէն վերջը։

Տոքթ. Կարնօլթ՝ Թրուվէի ըսածները կը հաստատէ. կ'ըսէ թէ՛ ինք Լոյսի գորութեամբ կարող եղած է բուժել՝ յօդատապէ, յօդացաւ, գլխացաւ, եւ խլութենէ տառապողներ։ Տոքթօրը կ'ըսէ թէ՛ իր գործածած Լոյսը՝ Ռէօնթկէյնի Ք ճառադայթներուն շատ նմանութիւն ունի։

Տնոր նոր ճշմարտութիւններ առաջ եկած են իւրամիւսիմիւս նկատմամբ։ Շատ մը գիտուն տարրաբաններ կը հաւատան որ եթէ ալիւմինիումը իր արդի անհամար զիւրութիւններով հրապարակ նետուի, ճարտարարուեստի ամենէն խոշոր ճարակ մը հայթայթած

(*) Անգլ. Գիտական հանդէսներէ քաղուած։

Այս երկու թռչունները ա'լ խորհրդանշան մը դարձան իմ աչքիս, կեանքի շատ մը պատկերներու եւ իրերու խորհրդանշանը, ու դեռաւոր դրացնիկիս մանկական բացատրութիւններէն հաճոյք կը զգամ, երբ իր առկաւութիւնը կը հարցնեմ՝ ցոյց տալով դարակին անկիւնը նետուած արժէքաւոր վանդակ։ Հակառակ խօսուած աղայ մը ըլլալուն, ինքը չի կրնար բացատրել թէ ինչո՞ւ այդքան շուտ երեսէ թողուց զայն, իր բոլոր հետաքրքրութիւնը ու համակրանքը միւսին վերապահելով. ու մէկուն ընդհատ եւ քմահաճ լուծիւնէն աւելի՝ ակնորժ զգալով քան միւսին անփոփոխ ձայնէն զոր կրնայ լսել երբ որ ուզէ։

Կեանքի ասպարէզին մէջ, որքա՞ն պիտի պատահի այդ հակադրութիւններուն, բնականին ու արհեստականին, առանց յիշելու իր երբեմնի վանդակները ու թռչունները որոնք կանուխէն ընտելացուցին զինքը՝ իր հակումները, իր գործվանքը չի սեղմելու պայմանադրականութեան մէջ։ Պիտի տեսնէ արուեստագէտներ որոնք քիչ՝ բայց լաւ կ'արտադրեն, գրագէտներ որոնք մեքենականօրէն չեն ուղեր ցուցադրել իրենց մտքի արտադրութիւնները ամէն օր, երգչուհիներ որոնք ըզձալի կը դարձնեն իրենց ձայնը, բանաստեղծներ որոնք առանց ներշնչումի չեն գրեր, ու ասոնց ճիշդ հակառակը, արհեստականները, պայմանագրականները, իրաւատ, ինքնահրաւէր, բայց շուտով տաղտուկ աղող, — այս պզտիկ սիրուն աղուն զսպանակաւոր թռչունին ու նետուած վանդակին պէս։

ՄԵՆԱՍԷՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ խմբագրութիւնը կը խնդրէ մեզի՞ն ծանուցանել Թէ ի դիւրութիւն Կ. Պոլսոյ իր բաժանորդներուն, Թերթին գործակալութիւնը ստանձնած է Վարդան էֆ. Կ. Վարդանեան, Պայլ շառու, Կ. Պոլսի։ Հետեւապէս բաժանորդագրուիլ փափագողները կրնան յիշել հասցէին դիմել։ Իզմիրի կիսամեայ շանդէսը ձեռքէ կը ծախուի նաեւ հատը 3 դրշի, գործակալ Վ. Վարդանեան էֆ. ի քով, ինչպէս նաեւ Պահչէ-Գաբու, Նշան էֆ. Օզանեանի խանութը։

—o—o—o—

պիտի ըլլայ, վասնզի՝ այդ պարագային՝ երկաթը, նիքէլը եւ մետաղային ուրիշ արտադրութիւններ՝ երկրորդական դեր մը միայն պիտի կատարեն :

Ալիւմինիումը իրրեւ նախընտրելի մետաղ նարոյէտն Գի կողմէ գործածուեցաւ նախ : Այն թուականէն վերջը բաւական տուներ սկսած են ալիւմինիումի գործածութեամբ զբաղիլ : Տեսքի մասին՝ ո՛չ մէկ մետաղ ալիւմինիումին կր հաւասարի . երկաթը եւ պղինձը՝ ժամանակի հոլովումով իրենց փայլը աննշմարելի կընեն, սակայն ալիւմինիումը՝ իր փայլը չկորսնցնելէ զատ, — չափազանցութիւն չըլլայ ըսել — կ'աւելցնէ : Ծանրութեան մասին ալ նոյնպէս . կապարը՝ ալիւմինիումէն 4 անգամ ծանր է : Ամուրիութեան մասին՝ ալիւմինիումը՝ բոլոր միւսներէն եւ մանաւանդ պղինձէն զգալապէս աժան է : Սեպնք թէ պղինձին քիւրն 2 ֆրանք է, այս համեմատութեամբ ալիւմինիումին քիւրն՝ 3 ֆրանք պիտի ըլլայ : Բայց՝ ըսն մը կայ զոր նկատի առնելու է, 2 քիլո պղինձի տարածութիւնը՝ 1 քիլո ալիւմինիումի տարածութեան հազիւ կը հաւասարի, հետեւաբար ըացորտապէս կը հասկցուի թէ՝ ալիւմինիումը գնի մասին ալ անմրցելի է : Այս իրողութիւններէն հետեւցնողներ կ'ան թէ՝ քանի մը տասնեակ տարիներէ վերջ մեծատուններու տուները ամբողջ ալիւմինիումով շինուած պիտի ըլլան :

Նաւագնացութեան մէջ ալ ալիւմինիումը մեծ յառաջադիմութիւն առաջ կը բերէ : Եթէ չոգենաւի մը մեքենական բոլոր կազմածը փոխանակ երկաթ ըլլալու ալիւմինիում եւ զած ըլլայ՝ նաւը իր առած բեռներուն եւ մարդոց կրկինը պիտի կրնայ պարունակել : Հիմա է՛ն արողընթաց չոգենաւերը 5-7 օրէն անդամտեանը կը ճկղքեն, բայց եթէ միւսնոյն չոգենաւերը փոխան երկաթի ալիւմինիումով շինուած ըլլային՝ շատ հաւանական էր 3 օրուան մէջ Նիւէօրքէն Լիվրբուլ մեկնիլ : Շատեր կ'ասկածած են որ ալիւմինիումը մէկ կէտի մէջ թերի է . այսինքն՝ կարծր չէ՝, վերջին փորձերը այս կարծիքները հիմնապէս կը ջրեն, եւ կապացուցանեն թէ՝ ալիւմինիումին կարծրութիւնը՝ արծաթի եւ անագապղինձի խառնուրդէն աւելի է :

§ Հազարաւոր տարիներէ ի վեր՝ օդային թափառաչընկերները, ամպերը՝ հետաքրքրութեան է՛ն կիղիչ թափով մը՝ մարդն խելապատակը յոգնեցուցած են : Ճիշտ է թէ՛ բանաստեղծները՝ ամպերը երգած են շատ անգամ, նկարիչներ անոնցմով փառաւորուած են եւայլն, բայց դեռ որոշապէս զիտցուած չէին ամպերու այլ եւ այլ աստիճանները : Բարեբաղդաբար՝ ալ ասկէ վերջ այդ արգելքի չպիտի հանդիպինք, շնորհիւ «Միջազգային ամպի խուզարկութիւններ»ուն (International Cloud Survey):

Մօտաւոր անցեալի մը մէջ՝ ամէն աղջիկ օգերեւութաբաններ որոշում տուին՝ համաձայնութեամբ աշխատիլ, ամպերու անբնական մասերը պարզելու համար : Ծրագրինը պատրաստուեցան՝ եւ Ամերիկայի ու Եւրոպայի մէտէօրաբանական զանազան կայաններուն մէջ՝ անխոնջ ճիգ մը սկսաւ երկնիքի յարստ փոփոխ երեւոյթներուն դէմ : Արդիւնք այն եղաւ որ՝ քանի մը նորահար գործիչներու շնորհիւ, զիտական մարմինը՝ այժմ պատրաստ կը գտնուի լիովին անդեկութիւններ հաղորդել հետաքրքիր աշխարհին :

Խուզարկութիւններուն մեծապէս նպաստող գործին «Նէֆօսքօպ» (Nephoscope) կը կոչուի : Գործին՝ նմար մը ունի, որուն մէջ նայելով՝ օգերեւութաբանները կրնան հասկնալ ամպերուն վաղքին արագութիւնը եւ ուղղութիւնը : «Թէօօլիթ» (Theodolite) կոչուած աւելի տարբեր գործիքով մը՝ կը զիտցուի ամպերուն բարձրութիւնը :

Ասկէ առաջ շատ զօւաւր էր մեզի համար ամպերու բարձրութիւնը ճշդել, այս պատճառով՝ զիտուները՝ միշտ հաւանական թուանշաններով կը ցուցնէին զայն : Սակայն այդ գտնուած է այն գործին՝ որ մէկ լարումով կը բացատրէ ամպերուն մէտէօրական աստիճանները :

Իզմիր

Վ. Ա. Գ.

ՆԱՐ ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ստացանք Ս. Դանիէանի ՆՈՐ ԴՊՐՈՅԻ Ը պրակը (Իբրբ աշակերտին), որով երկու պրակ միայն կը մնայ ամբողջացնելու համար : Կեղրոն դրուած եւսակրթութեան ամբողջ դասընթացը այս շաբթը : Նոյնպէս, ՀԱՆԴԻՍԱՐԱՆ, շինիչ մանրագիտ.

պեր եւ բարոյագիտական դասեր , աշխատասիրութեամբ Ս. Դաւթեանի :

— Ժ. Մ. Մինաս Տարբանը (Բերա , Սլթէ տ'Ալէք , Թ. 20) հրատարակած է 1902ի ընդարձակ Տարեցոյց մը , ֆրանսերէն լեզուով, Indicateur d'exportation-importation en Orient, 830 լայն էջերէ բաղկացած հատոր մը որ կը պարունակէ առեւտրական ու սեղանաւորական զոր- ծանոթեցնող յատուկ տեղեկութիւններ , օրինական տրա- մադրութիւններ , հասցէներ ու ծանուցումներ : Այս փա- ակագով հատորին գինն է 8 1/2 ֆրանք :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պատրիարք Հայրը անցեալ չարաթ իրի- կան Կայս. Պալատ գնաց , հետն ունենալով Տէր-Ներսէսեան Տիրոջն էջին , եւ Ա. Բար- տուղար Վսեմ. Թահսին պէյին յանձնեց ե- րախտագիտական ու բարեմաղթական այն Ուղիքը որ Աղգ. Վարչութեան անդամնե- րուն կողմէ ստորագրուած էր : Ն. Սրբաղ- նութիւնը այս առթիւ սիրալիր տեսակցութիւն մը ունեցաւ Ա. Բարտուղար Պէյին հետ :

Գուրպան պալատի տօնին առթիւ , Ս. Պատրիարք Հայրը հինգչարթի օրը Կայս. Պա- լատ գնաց՝ շնորհաւորական Ուղիք մը մա- տուցանելու յոտս Կայս. Գահոյից : Ն Սըր- բաղնութիւնը նոյն օրը եւ երէկ շնորհաւո- րական այցելութիւններ տուաւ նախարար- ներուն :

Բաղ. Ժողովը նիստ չըրաւ այս ուրբաթ , Գուրպան Պայրամի տօնին առթիւ :

Ազգ. Պատրիարքարանի կողմէ տրուած հեռագրական հրահանգին համեմատ՝ Ամասիոյ առաջնորդ Տ. Արխտակէս Ծ. Վ. եւ Վանայ առաջն. տեղապահ Տ. Սահակ Ծ. Վ. անմի- ջապէս Էջմիածին պիտի ուղեւորին , եպիս- կոպոս ձեռնադրուելու համար : Ս. Հայրա- պետը , որ այս պահուս Թիֆլիզ կը գտնուի , մինչեւ այն ատեն Մայր-Աթոռ դարձած պի- տի ըլլայ :

Յեկրաւարժ.— Շամախիի ու Կարնոյ երկ- րաշարժներուն օրոտճմիկ նկարագրութիւն- ները դեռ չի վերջացած , ազետալի երկրաշարժի լուր մըն ալ Բէնդերիէն հասաւ , ուր ի մէջ ալոյց՝ մեր եկեղեցին ու դպրոցը եւ քաղքին

առեւտրուն մեծ մասը փլեր են , Ժողովուրդը չքաւորութեան մատնելով եւ հարկադրելով վրաններու տակ ապաստանիլ , Կայսերական հրամանաւ , անմիջական դարմաններ ու նպաստ- ներ կը հասցունին արկածեալներուն Պատրիար- քարանէն ալ հեռաւորով 20 օսկի զրկուեցաւ Բէնդերի :

Յուսադեմի Ս. Պատրիարք Հայրը՝ Իզ- միրի Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցի հա- րիւրամեայ յորեւեանին առթիւ 200 ֆր. նուէր զրկած է , առաջնորդ Տ. Մելքիսեդէկ Սրբա- զանին ուղղեալ սիրալիր նամակով մը՝ իր հայրական օրհնութիւնները ձօնելով Կարգա- դիր Յանձնաժողովին անդամներուն եւ յարա- տեւութիւն մաղթելով նոյն հաստատութեան :

Պ. Գալմայեան , երիտասարդ դերասան , որ Բարիդէն Պոլիս գալով՝ ասկէ Թիֆլիզ եւ Պաքու ուղեւորած էր թատերական ներկա- յացումներ կազմակերպելու , փետրվարի սկիզ- քը Նրեւան այցելելով՝ արուեստասէրներու խումբի մը հետ , քաղաքային ժողովարանի զանիճին մէջ «Համէդ»-ը եւ «Օթէլլո»-ն ներկայացուցեր է յաջորդաբար , ինչպէս կը հաջորդէ Արեւելք : Այս երկու ներկայացում- ներն ալ մեծ յաջողութիւն մը չեն ունեցեր :

Արմաւի նորընծաներէն Տ. Ղեւոնդ Վր. Դուրեան՝ Ս. Պատրիարք Հօր անձնական քա- րտուղար կարգուեցաւ :

Տոք. Տ. Ղազարոսեան , Պոլսերնակ երի- տասարդ հայ բժիշկը , որ իրեն մասնագիտու- թիւն ըրած է կանանց հիւանդութիւնները , Բարիդի «Semaine Gynecologique» Բժշկա- կան հանդէսին մէջ հրատարակած է շատ ուշագրաւ ուսումնասիրութիւն մը Traite- ment des hemorragies post-abortionum վերնա- գրին տակ , արդիւնք երկար փորձառութեան եւ խղճամիտ գննութիւններու : Այս ուսում- նասիրութիւնը որ մեծապէս գնահատուած է Ներսիսեանի ակադեմիոյ բժիշկներէ , պատիւ կը բերէ երիտասարդ Տոքթորին :

Հանքաճամօք սպարանապետ հանգուց- եալ Յովհաննէս էջ. Միւհէնտիսեանի այրին , Տիկին Էֆտիկ Միւհէնտիսեան , իր մահկա- նացուն կնքեց չարթուս սկիզբը եւ յուղար- կաւորութիւնը հանդիսաւորապէս կատար- ուեցաւ չորեքշաբթի առաւու Բերայի Ս. Նը-

բորդութիւն եկեղեցին : Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք իր գաւկըներուն՝ Օր. Վիրգինէ եւ Օր. Մառի Միւհէնտիսեանի, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկին Խաչէրեանի :

Վիեհնայի Միխայիլեաններուն Պօլսերնակ երիտասարդ անդամները որոնք ժամանակէ մը ի վեր անհամաձայնութեան մէջ էին իրենց Վիեհնաքանակ տարեցներուն հետ, վերջնապէս գոհացում գտած են : Արքահայր Այտընեան արքեպիսկոպոս, հաւասարապէս յարգելի ու սիրելի ըլլալով հանդերձ երկու կուսակցութիւններուն, կը հրաժարի իր ծերութեան ու տկարութեան պատճառաւ, եւ մօտ ատենէն Արքահօր տեղակալի ինչպէս նաեւ Վարչական Խորհուրդի ընտրութիւն պիտի կատարուի, այս վերջինին անդամներն ալ հրաժարեցուցուած ըլլալով Հոռմի Կարդինալաց Ժողովին որոշմամբ : Նոր ընտրութիւնները, բացառաբար, պիտի կատարուին Հոռմի մէջ : Միաբանութեան 40 անդամները, որոնցմէ 33ը նոր տարրը կը կազմեն, իրենց քուէները պիտի կեդրոնացնեն հինգ միաբաններու վրայ : Քուէարկութեան պիտի մասնակցին նաեւ նախորդ Արքահայր Այտընեան արքեպիսկոպոս եւ հրաժարեցուցուած Վարչական Խորհուրդին անդամները որոնք մինչեւ նոր ընտրութիւն՝ առժամաբար պաշտօնի վրայ կը մնան :

Միխիթարեան երկու բաղմանմուտ եւ ծանօթ անդամները, Հ. Գալէմքեարեան եւ Հ. Մէնէվիեան, որոնք այդ անհամաձայնութիւններուն պատճառաւ ստիպուած էին Բանկալթիի Միխիթարեանց վանքը փոխադրուիլ, չի մասնակցելով նաեւ Հանդիս Աւստրիայի խմբագրութեան, հաւանաբար աւելի գործօն մասնակցութիւն մը ունենալու պիտի հրաւիրուին թէ՛ Միաբանական դործերուն, եւ թէ՛ այդ Պարբերականին հրատարակութեանը մէջ : Արդէն իսկ, Հ. Գալէմքեարեան վերահաստատուած է Բանկալթիի Վանքին մեծաւորի պաշտօնին մէջ :

Էջմիածնի Ղազարապատ հիւրանոցին մէջ երկու շարժ առաջ մեռեր է Ակնեցի Յովսէփ Ճանիկեան, որ կաթողիկոսական վերջին ընտրութեան ժամանակ, իր թեմին պատգամաւորն էր, եւ անկէ ի վեր իր բնակութիւնը հաստատած էր Թիֆլիզ : Հեղինակած էր «Հնութիւնք Ակնայ» գործը, հաւաքածու բանասիրական, ժողովրդական, բարեպաշտական եւն., որ մրցանակի արժանացաւ : Վերջերս շատ կարօտ վիճակի մէջ ըլլալով, Ս.

Հայրապետին բարեհաճ կարգադրութեամբ կը խնամուէր յիշեալ եկեղեցական հիւրանոցին մէջ :

(Բիւզանդին)

Պրուսայի առաջնորդ Տ. Յովհաննէս եպիսկոպոս Արշարունի խնդրած է Ազգ. Վարչութեանէն որ բաւ համարուելով իր վեցամիսյա պաշտօնավարութիւնը, հրաժարականը ընդունուի : Ահա՛ եկեղեցական մըն ալ որ թեմի մը վրայ եպիսկոպոս ձեռնադրուելէ ետքը, շատ չանցած հեռանալ կուզէ անկէ : Այվազեան եպիսկոպոսը՝ գոնէ Եգիպտոսի առաջնորդութիւնը ընդունելու համար թողուց Ռօստոմթոյի առաջնորդութիւնը : Արշարունի եպիսկոպոսին հրաժարման շարժառիթը ինչ է արդեօք :

Լոյս չաթաթաթերթը անպայման կերպով դադարման դատապարտուեցաւ Տպագրական Տեսչութեան հրամանով :

Պատեօնական ծանուցում Ազգ. Ուսումն. Խորհրդոյ. — Կիրակնօրեայ դասընթացքի շարունակութիւնը եւ Ա. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ մարտ 10, Կիրակի օրը, ըստ առաջնոյն Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Արհեստանոցի մէկ սրահին մէջ եւ դասախօսութիւնները պիտի սկսին երեք ժամ 2/ին :

Առաջին նիստի դասախօսութեանց յաւանդիրն է, —

Ռէթէն էֆ. Պէրպէրեան. — (Շար). Հոգեբան, մանկավարժութեան :

Պետրոս էֆ. Կարապետեան. — (Շար). Օսմանեան ուսուցման եղանակին :

Օգնական-ուսուցիչները, օգնական-լաւր ժուհիները եւ ուսուցչական ընտրելիները հրաւիրուած են ներկայ գտնուիլ այս դասախօսութեանց :

(Կնիք)

Գեղարուեստահրեանքուն համար հանկուլում մը : Jane Hading, ֆրանսացի համբաւաւոր դերասանուհին, Պոլիս կը հասնի այս երկուշաբթի, նոյն իրիկունէն իսկ սկսելով իր հինգ ներկայացումներուն շարքը Թէփէ-Պաշաթաթերնին մէջ : Սառա Պէռնարի եւ Բէթանի չափ քնահատուած իր արուեստովը, եւ նշանաւոր նաեւ իր գեղեցիկութեամբը զոր քննադատները «դասական գեղեցկութիւն» անուանած են, Տիկին Ժան Հատէն պիտի ներկայացնէ Տիւմա Որդիի, Մարտէլ Բրէշիլ եւ Ժօրժ Օնէի լաւագոյն թատերախաղերը :

Արսօնաւէր Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՍԵԱՆԻ
Կ. Պոլիս, Յինճանքլար եօզղու, Թիւ 27

ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ԱՐԾԱԹԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ՝ — Ալիքսան Մ. Պարսիզպանեան Ոսկերչական Վաճառատունը (Պոլիս, Ոսկերչաց Շուկայ, թիւ 13) որ երկար տարիներէ ի վեր կը գործէ ճշգրտութեամբ եւ յաջողութեամբ, եւ որուն գործածած ոսկին ու աղամանդները առաջին տեսակէ ըլլալէ զատ, արհեստագիտական պատրաստութիւնն ալ խիստ ճաշակաւոր է, եւ այս տեսակէտներով միշտ գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները, այս անգամ բոլորովին նոր դրութիւն մը հնարած է, — յոյժ գիւրամատչելի գիներով իր ծախած ապրանքները, ի հարկին, 100ին 10 զեղչով ետ առնել յաճախորդէն եւ դրամը վճարել, Կ'արժէ այցելել յիշեալ Վաճառատունը, եւ աչքէ անցընել անոր ոսկերչական յուսադրութիւնները, այս կարգի որ եւ է գնում ընելէ առաջ:

**ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹ, Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ**

ԲԵՐԱ, ՄԵՇ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Ուերայի Լիսէին դէմ

Դե. Եւ. Շք. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը 6 եւն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. Իիթիէճեան, Վաճառման կեդրոնատեղին է Պողոտայեան Գրատունը, կը գտնուի նաեւ ամէն հայ գրավաճառներու քով:

Գին 15 դրուշ:

3—10

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱՒ Ի ԲԱՐԻՉ 1828—1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000 »
Դրամազուլիս եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամազուլիս	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամազուլիս եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Լուիսի»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵՂԻ ԶԷ ԳՏՆԵՂ ԱՐԵԻՆԵՂԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները, Շահարաթիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Լուիսի ապահովագրողք **ԶԵՐԾ** են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) **ՅՈՒԻ** եւ **ՎՆԱՍԱԿԱՐ** դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան գրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ** Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանքային դիմացը
Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՀԱՊԻԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ
 ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՏԵՐ
 ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Մ. ՏԵՐ-ԴԱԻԻ ԹԵԱՆ

Թիւ 85 — Կալարա, Վոյվոսա փողոց — Թիւ 85


Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին մէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ձերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու հատարեալ հոգածութեամբ պատրաստել հարաւանաց ձերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներ օձիք, թեւնոց, ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամապնակ, զմեյի «Չէֆիլտ», խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանաց ազնուութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտ վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵՄԱԼ ԵՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն աւելի կտտարեւագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ԲԵՐԱ. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց .

ԿԱԼԱԹԱ. } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
 } 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց .

ՊՈԼԻՍ. } 1. Սուլթան Համամ .
 } 2. Սուլթան Պէյազիտ .

Դասերը եւ նորոգութիւնք ձրի .

Կասարեալ երաւեստորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ԵԳԵՍՍԵՏԻՆ
 ՄԱՍՍՐԱՎՈՐԵՐԻՆ
 ՇԱՊԻԿԻ